



ՀՀ կրթության և գիտության նախարարության երաշխավորությամբ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն կազմակերպում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք /հավաստագիր/ ստանալ ցանկացողների համար վերապատրաստման դասընթացներ:

Դասընթացները կկազմակերպվեն Երևան քաղաքում Մարմենի 1,2/1 հասցեում (Մատենադարանի հարևանությամբ):

Վերապատրաստման դասընթացներին կարող է մասնակցել այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն, վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական աշխատանքի առնվազն հինգ կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն երեք կամ կառավարման ոլորտի առնվազն հինգ կամ մասնագիտական առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

Վերապատրաստմանը մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝

1. դիմում՝ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի տնօրենի անունով (լրացվում է տեղում).
2. 3x4 չափի մեկ լուսանկար.
3. բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը.
4. աշխատանքային գրքույկի պատճենը կամ քաղվածքը.
5. անձնագրի պատճենը.
6. մասնագիտական գիտելիքներն ու գործնական կարողությունները հավաստող այլ փաստաթղթեր (գիտական աշխատություններ, հրապարակումներ կամ դրանց ցանկը).
7. «Հայէկոնուբանկ» ԲԲԸ-ում «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի 163008180909 հաշվեհամարին փոխանցված գումարի անդորրագիրը:

Փաստաթղթերի պատճենները ներկայացվում են բնօրինակի հետ միասին: Պատճենների համապատասխանությունը որոշելուց հետո բնօրինակները վերադարձվում են:

Վերապատրաստման ընթացքում անձը կարող է օգտվել օրենքով սահմանված չվճարվող արձակուրդից կողմերի համաձայնությամբ:

Վերապատրաստման դիմած անձը կարող է ստանալ դասընթացի մասնակցության մասին տեղեկանք՝ աշխատանքի վայր ներկայացնելու նպատակով:

Վերապատրաստման դասընթացի ընդհանուր ծրագրային ծավալի ուսուցման գործընթացի 1/6-ից ավելի բացակայած անձը համապատասխան վկայական չի ստանում:

Վերապատրաստման դասընթացի արժեքը 78000 դրամ է, ներառյալ՝ մասնակիցներին տրամադրվող գրենական պիտույքներն ու ուսումնական նյութերը:

Դասընթացի սկիզբը որոշվում է առաջին դասին՝ մասնակիցների համաձայնությամբ: Առաջին դասը սկսվելու է ժամը 10⁰⁰-ին:

Դասընթացները կվարեն տնօրենների վերապատրաստման մեծ փորձ ունեցող աշխատակիցներ, հրավիրված այլ մասնագետներ:

Դիմումներն ընդունվում են 2015 թվականի մարտի 23-ից ապրիլի 10-ը ներառյալ՝ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ում /սեյնյակ 6, հեռ. (010) 56-72-93, 094-45-29-45/ ամեն օր՝ ժամը 9⁰⁰-ից 18⁰⁰-ն: Դասընթացները կսկսեն ապրիլի 13-ից:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ վերը նշված հեռախոսահամարներով, www.masterstyle.am կայքից կամ՝ այցելելով «Մաստեր Սթայլ» ՍՊԸ: